ԼՈՒՅՍ ՈՒ ԲԱՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՐՄԱՆՈՂ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻՆ

Մարո Մարգարյանը խորհրդային շրջանի 40-80-ական թվականների բանաստեղծուհի է: Պատմական զարգացման այդ ժամանակահատվածում տեղի են ունեցել տնտեսական, քաղաքական մեծ տեղաշարժեր՝ անհատի պաշտամունքի դաժան տարիները, Հայրենական պատերազմն իր արհավիրքներով, տագնապներով ու հաղթական ավարտով, իսկ ավելի ուշ Խրուշչով-Բրեժնևյան «լճացման» տարիներին պետականորեն իրականացվող քաղաքականությունը, որոնք իրենց ուղղակի ազդեցությունն ունեցան հոգևոր մշակույթի վրա: Պակաս կործանարար չէին նաև Գորբաչովյան վերակառուցման պատրանքներն ու պարտադրանքները:

Այս բարդ իրադրության մեջ գրողի անհատականությունն ու բանաստեղծական ես-ը լուծվում էին «հեղափոխական տարերքի» և «հաղթանակից հաղթանակ» տանող ճանապարհին: Խորհրդային գրականության մեջ կային, սակայն, այնպիսի գործիչներ, որոնք դեպքից դեպք տուրք էին տալիս անցողիկ այդ շրջանի ընդհանուր ոգուն: Բայց, լինելով իսկական արվեստագետներ, նրանք ստեղծում էին այնպիսի երկեր, որոնք իրենց թեմատիկ ընդգրկումներով, գաղափարական ու գեղարվեստական արժանիքներով շարունակում էին նորովի զարգացնել դասական գրականության լավագույն ավանդները, համարձակորեն քննադատում էին կյանքի ստվերոտ կողմերը:

Այդ ստեղծագործությունները, սակայն, դրվում էին փակի տակ, կամ չէին տպագրվում, և ընթերցողն անհաղորդ էր մնում դասական և նոր շրջանի գրականության զարգացման բնականոն հաջորդականությանը:

Գրական ասպարեզ էր եկել մի նոր սերունդ, որն անցել էր 30-40-ական թվականների գաղափարաքաղաքական խմբավորումների դաժան պայքարի բովով, համարձակ էր, ուներ նոր, թարմ խոսք՝ Հովհաննես Շիրազ, Սիլվա Կապուտիկյան, Գևորգ Էմին, Համո Սահյան, Մարո Մարգարյան, Պարույր Սևակ, Վահագն Դավթյան, Հրաչյա Հովհաննիսյան: Այս հեղինակները, որդեգրելով իրենց նախորդների լավագույն ավանդները, բանաստեղծությունների առաջին իսկ ժողովածուներով գեղարվեստական գրականություն բերեցին թեմատիկ բազմազանություն ունեցող ստեղծագործություններ: Այդ շրջանի տիպիկ բնութագրությունը տվել է ժամանակի հայ գրականագիտությունը՝ ընդգծելով այն հանգամանքը, որ թե դասական, և թե ժամանակակից գրողների մարդերգությունը համարվել է փիլիսոփայության հիմնական ելակետ:

Այդ առիթով՝ գրականագետ Ս. Աղաբաբյանը նկատել է՝ «Ճշմարիտ բանաստեղծությունը բոլոր դարերում ապրում և շնչում է ՀՈԳԵՆՅՈՒՄՈՎ, իր պաշարները քաղում է պատմության տվյալ հատվածի հոգևոր բովանդակությունից, պեղում և ասպարեզ է հանում բացառապես հոգևոր արժեքներ շարժումներ և իրողություններ»[1]:

Առաջադրելով գեղարվեստական համակարգի այս գաղափարը հարկ է նկատել, որ հայ գրականության մեջ մարդերգությունը որպես պատմականության վերին չափանիշ, արծարծվել է դեռևս հին շրջանում, այնուհետև միջնադարյան քնարերգուների ստեղծագործություններից մինչև մեր օրերը:

XX դարի 50-60-ական թվականների հատվածում ստեղծված նոր հոսանքն իր հետ գրական կյանք բերեց անհատի բազմակողմանի զննման սկզբունքը, որի բուն առաքելությունը մարդու ընդերքային բազում կուտակումների, գեղագիտական ընկալումների, տրամաբանության և բանականության ուսումնասիրության մեջ էր: Այն մարդու, որի «...արյան ճնդիկը մանր այս երկիր կոչված գնդից ավելի մեծ է և ծանր»: Հաղթահարելով այն միտումը, որ հասունացել էր Չարենցից հետո պոեզիայի կանգառի վերաբերյալ, նրանք իրականության և իդեալի, կենցաղի և կեցության հատման կետերում կարողացան շրջանցել նաև սխեմատիզմի պարտադրած կեղծ թեմաների լաբիրինթներն ու կաղապարված ձևերը, ապա ստեղծել Չարենցի «Բանական մարդու» (Homo sapiens)-ի տրամաբանական շարունակությունը:

Սա չափազանց կարևոր ըմբռնում էր և դրսևորում էր 60-ական թվականների բանաստեղծության հիմնաքարային առանձնահատկությունները:

Իր ժամանակի գեղարվեստական փորձի և սեփական ճշմարիտ ու անկեղծ խոստովանությունների միջոցով անհատական ապրումների ու զգացմունքների առանձնահատուկ երանգ են ստացել Մարո Մարգարյանի ստեղծագործությունները:

Բանաստեղծուհու որոնումները ինքնատիպ ու ինքնուրույն գրելաոճի բնագավառում բերել են ստեղծագործական բնական, առողջ երակ, և նա դարձել է 50-ական թվականների պոեզիայի հետաքրքրական դեմքերից մեկը:

Մարո Մարգարյանն ամբողջովին ապավինել է իր ժամանակին, նվիրվել իր բանաստեղծություններին, որոնք թարմությամբ ու անմիջականությամբ զրուցում են ընթերցողի հետ, ներքաշում արդիական աշխարհ՝ գեղարվեստական կառուցվածքների ու զգացմունքների դրսևորման բարձր որակներով:

Նրա երգերում լույսեր են վառվում՝ շաղախված սիրանյութով ու կրակով, կյանք է տրոփում և կյանքից ածանցվող ազգային ու բարոյական չափանիշների ընկալումն ու զգացողությունը կա նրա պոեզիայում:

---

[1] Ս. Աղաբաբյան, Հոդվածներ, դիմանկարներ, հուշեր, 1982, էջ 293:

Մարո Մարգարյանն իմաստավորում է հույզը, հիմնահարց է դարձնում մարդկային խոհական աշխարհը, մարդու ճակատագրի ու բախտի հանդեպ խոր անհանգստություն ապրում: Այսպես է բնութագրել աշխարհում լավն ու բարին որոնող բանաստեղծուհու ինքնատիպ ստեղծագործությունները գրականագետ Սևակ Արզումանյանը՝ «Լավի ու բարու որոնումներով էլ նա կենսական երգեր էր ստեղծում, հույզի ու խոհի նուրբ ներդաշնակությամբ բանաստեղծականացնում արդիական սուր խնդիրները»[2]: Սևակ Արզումանյանը գտնում է, որ նրա ժողովածուները արդի պոեզիայի «առանձին միտումների արտահայտությունն են՝ պայմանավորված գեղարվեստական շարժման մեջ՝ մարդկայինի որոնումներով»[3]:

Դեռևս 1965-ին լույս տեսած «Ջնհալից հետո» խորագրով ժողովածուում Մարո Մարգարյանի քնարական բանաստեղծություններն իրենց տեղն են գտել «Սուքը ճաքել է մի ճառագայթով», «Հոգնել ես իմ սիրտ», «Մտահոգ դեմքեր», «Անանուն տաղանդ», «Դու էլ գնացիր» շարքերում: Այնուհետև մասամբ տպագրվել են «Օրերի խորքից» (1975), «Բանաստեղծություններ» (1978), «Հատընտիր» (1985) ժողովածուների «Իմ սերունդն ամբողջ եղյամի մեջ է» և «Բոլորն ուզում են աշխարհը ուղղել» շարքը, որը սկսվում է համանուն բանաստեղծությամբ:

Առաջին երկու տողերից բխող փիլիսոփայությունը կյանքի նկատմամբ դառնում է անհատական խնդիր.

Բոլորն ուզում են աշխարհը ուղղել,
Ոչ ոք չի ուզում սկսել իրենից....* (էջ 304)

Հասարակական-բարոյական չափանիշը երևան է գալիս փիլիսոփայական խոհականության դիտանկյունից՝ իր բնույթի կարևորությամբ առաջադրելով հետևյալ հարցը՝ «Արդյո՞ք մարդն իրավունք ունի իր իսկ նմանին կյանքից առնված դասեր տալու, եթե դրանում ինքն էլ առաջադեմ չէ»

Տալիս են անվերջ
Իմաստուն դասեր,
Խորհուրդներ խորին
Իրենից բացի, մյուս բոլորին... (էջ 304)

Գերիշխող համընդհանուր անառողջ գաղափարի և կաղապարված դրույթների խեղդող միջավայրում Մարո Մարգարյանն առաջադրել է կարևորագույն խնդիրներից մեկը անհատի դերն ու գործունեության ընդգրկման շրջանակները հասարակական կյանքում:

---

[2] «Գրական թերթ», 1976, 30 հունվարի:
[3] Նույն տեղը:
* Մ. Մարգարյան, Հատընտիր, 1985, էջ 304: Այսուհետև սույն գրքի բոլոր հղումները տես շարադրանքում փակագծի մեջ:

Հեղինակի դիտարկմամբ, ինչպես ներկայացված է «Հեշտ է երևի» բանաստեղծության մեջ, ավելի կատաղի ընթացք է ստացել աթոռամոլությունը, և ապրելու ու գոյատևելու ճակատագրական հարցը դարձյալ Դամոկլյան սրի պես կախվել է սերունդների գլխին:

Հեշտ է երևի շուտ լավ երևալ,
Ու դժվար է շատ
Մի քիչ լավ լինել,
Եվ ինչ իմանաս,
Թե խուլ դարանած ինչ ուղիներով
Ով է աշխարհում
Ում փոխարինել...(էջ 304)

Շոշափված թեման, անտարակույս, մարդկության համար այժմ էլ և ակնառու է, և հանելուկային: Որպես կանոն այն կրում է անհատական բնույթ քանի որ՝ յուրաքանչյուրն ապրում է յուրովի, դավանում իր սկզբունքներին:

Հարկ եղած դեպքում մարդիկ նույնիսկ հորինում են երջանկությունն այնպես, ինչպես պատկերացնում են կամ հասկանում, երբեմն էլ այն գալիս է, իսկական սերը հորդում է ուղիղ ճանապարհով, սակայն

Ու չզգալով դեռ, ու գլխի չընկած,
Քանդում են բոլոր ճանապարհները
Ամեն մեկն իրեն
Հասկացածի պես: (էջ 305)

Երբեմն բանաստեղծուհու սիրտը «ճաք է տալիս», երբ տեսնում է մերթ մեծ հերոսին, մերթ «փքուն տեսք առած» նահատակին, վաճառածը միայն «ողորմելի ու սուտ» սրբություն, արդյունքում՝ «չնչին շահեր», որոնցից ծնունդ են առնում «մեծ աշխարհի» բոլոր ցավերը, և նա հորդորում է՝

Մի՛ պայթիր իմ սիրտ,
Քո փոքրիկ վերքով
Այս մեծ աշխարհի ցավերը ներիր: (էջ 306)

Բանաստեղծական պատկերների հետագա համամասնություններում դատապարտվում են «սարքած փառքերով» «բախտավորները», որոնց համար խորթ են թե անկեղծ սերը, թե «ջերմ ու տաք» խոսքերը: Նրա առանձին բանաստեղծություններ հնչում են որպես դարի ճիչ, բայց և մարտահրավեր ուղղված բոլոր ժամանակների անձնապաշտության, եսասիրության, էգոիզմի դեմ: Նորի, առաջավորի հետ զուգընթաց հասարակության մեջ սաղմնավորվել էին նաև ստվերոտ բարքեր, մարդկային հարաբերությունների չգրանցված նորմեր ունենալով ավելի խիտ թանձրացում և ենթատեքստայնություն

Ժպտացող ու լուռ,
Եվ շաղակրատող տասերեսանի,
Որին ճանաչես, որին իմանաս
Որին դեմ գնաս,
Որին դիմանաս:

Քանի՞ կյանք ունես, ասա ինձ, քանի՞... (էջ 306)

Երևույթի խտացումը կատարվում է հռետորական հարցադրումով «Քանի՞ կյանք ունես, ասա ինձ քանի՞» (էջ 306), որն ունի իր տրամաբանական պատասխանը «Անանուն տաղանդ» քերթվածում (էջ 308), ուր նրա բանաստեղծական «ես»-ը դեմ առ դեմ կանգնած է «անշնորհք մարդկանց» «քայքայող ուժի» խավար տիղմի և մուժի խոնավության հանդեպ: Բանաստեղծուհին նրանց որակում է որպես «հանճարներին մեկ օրում ծալող», քայքայիչ ուժով անանուններ են՝ մշտադարան ու հավերժ արթուն (էջ 308)

«Ի՞նչ եմ անում» (էջ 309), - իր իսկ առաջադրած հարցին պատասխանալիս Մարգարյանը մերթ «խոր խլանում ու համրանում» է, մերթ «համր ծխում», մերթ «հրաբխում», երբեմն նույնիսկ մարում են հոգու կրակները, սակայն «ցուցարար», «սուտ հերոսների» անուններն աշխարհով մեկ վառելիս ու երկինք նետելիս՝ նա չի կարող անտարբեր լռել

Բոլոր հոգով ծուռերի դեմ,
Դարանակալ լուռերի դեմ
Ես գոռում եմ աշխարհով մեկ: (էջ 309)

Կենսակերպը, տարիների հետ կուտակված մեծ փորձը շատ ավելի են իմաստացրել բանաստեղծուհուն, և այդ չափանիշներով էլ հանգում է այն բանին, որ կյանքում ապրելու նախապայմանը ամենևին էլ մեծարանքի խոսքերի մեջ չէ, այլ «ջերմության, մտերմության, տաքուկ սիրո» և անմնացորդ նվիրումի՝

Եվ ինձ միայն չասված բառեր
Ջերևացող լույս ու արև,
Ջեր հոգու լուռ մենարանով
Սերն իմ տարեք,
Ջնկատվող մտերմությամբ,
Խոր լռությամբ ինձ մեծարեք: (էջ 310)

Նա «խենթանում է» հաճախ օրապահիկ դարձած «մարդկային հոգու ոլոր-մոլորից», որով մարդիկ, որպես կանոն հաճախ որոշում են ինչ-որ ձևով լռեցնել իրենց ագահության անհագ զգացումը:

Բանաստեղծուհին հոգեկան խռովքի մեջ է. նա «երեխայի պես» «խոր խոցվող» է, չնայած որ անցել է կյանքի փոքրիկների ու վերուվարների ուղիների միջով: Բայց դրանք կարծես անցյալ են և էլ չկան, մոռացվել են և դրանցից «Հիմա մի փոքրիկ կածան է մնացել», ուր և շտապում է «թևատարած թևածել» բանաստեղծուհու անհանգիստ հոգին՝ գտնելու համար նոր ու շիտակ ճանապարհներ, «լուսագրված երազներ»՝

Անցիր դու, իմ երգ, ազնիվ ու անթեք
Ճամփան այս ծռված՝
Ճառագայթի պես ուղիղ ու շիտակ,
Ճառագայթի պես ուղիղ ու շիտակ: (էջ 310)

Այս շարքի մեջ առանձնանում են այն բանաստեղծությունները, որոնց մեջ շատ պատկերավոր է ներկայացված բրեժնևյան ճահճացման շրջանի անորոշ և անհեռանկար տարտամությունը, երբ մի կողմում քաղցր-մեղցր հայրենասիրությունն է, մյուս կողմում համատարած աթոռակռիվը, ժողովրդական օրենքների պլպլացող փայլի տակ իրացվող քաղաքականությունը:

Բարդ է Մարո Մարգարյանի բանաստեղծական ներաշխարհը: Նա ներքնատես է այնքանով, որ չի ուզում նույնիսկ նկատել ինքն իրենով հարբած «բախտավորներին» (էջ 314), քանի որ

Իրենց քթի ծռությունը
Համարում են մեղքը դարի.
Իրենց հոգու կեռությունը
Վերծանում են ցեղի բախտով: (էջ 315)

Մարո Մարգարյանն աստիճանաբար ամբողջացնում է բախտախնդիր բախտավորների կերպարը. նրանք «կործանում են ու կործանվում», նրանք «քանդում են սեփական տունը», ընդունում երջանիկի կեցվածք, գողանում են ժողովրդի քրտինքով ստեղծված բարիքը, իրենց հաղթող հորջորջում ու համարում կառուցող:

Մարդկանց նկատմամբ ունեցած մանկական անմեղ ու պարզ հավատի և քամու թևին օրորվող օդեղեն երազների համար շատ անգամ է ապտակ կրել բանաստեղծուհու նրբազգաց հոգին «անարև» ու «աներազ» մարդկանցից: Այս խռիվ հուզերից էլ հորձանք է տալիս անպատասխան մնացած հարցը «այս ո՞ր անգամն ես դեմ առնում պատին...» (էջ 316) Մարգարյանը, սակայն չի հիասթափվում մարդկանցից, քանի որ գիտի՝ ինքը «վատ լողորդ» է կյանքի հոգսերի ծովում, իսկ «անարև» մարդիկ միմյանց ուղղում են «թովիչ ներբողներ» և «դարոիմա» բաժակաճառեր:

Եվ այդ հորձանուտում խորտակվում են ոչ միայն «ամենավսեմ», «մեծ ու բարձրանուն» սրբությունները, այլև անապական անուրջները:

Նա ուղղակի չի կարողանում հարմարվել ժամանակների այդ խրթին «շարժ ու ձևերին», չի տիրապետում շողոքորթելու ու շողարձակելու բարդ արվեստին.

Ոչ ժամանակն է հաշվի առել ինձ,
Ու ոչ էլ ես եմ հարմարվել նրա
Նեղ սահանքներին,
Կամ շուտ եմ ծնվել,
Կամ ուշացումով չափից ավելի: (էջ 320)

Մարո Մարգարյանի խոհափիլիսոփայությունը լավի ու բարու լուսաբանման, ժամանակների ամենախոր ընդերքներից եկող հոգեկան մրմունջների, «մեծանունների մեծազոր ցանկերի» և անպատասխան մնացած ծով հարցերի բազմապիսի ու բազմազան որոնումն է: Նրան «խեղդվելու չափ» հարկավոր են «լավ ընկեր»-ը, «լավ մարդ»-ը, որովհետև «ոչ մի գունեղ մետաղ ու գանձ, ոչ մի

թռիչք երկինք հասնող» (էջ 322) երբևէ ի զորու չեն փոխարինելու «մաքուր ու լուսնատես» ընկերոջը, մարդու ջերմ խոսքին: Դիզվել են տարիները, «ծանրացել են թռիչք ու թափ», խլացել են ասես նրա ցավերը, և «մութը ճաքել է մի ճառագայթով»: Այստեղ է, ահա, որ բանաստեղծուհին դիմում է լավ մարդկանց՝

Ո՞ւր եք, հավաքվեք, աշխարհի լավեր.
Հոգիներ անգին, ջերմ ու սրտակեզ
Ես հոգնած եմ շատ,
Ես կանչում եմ ձեզ: (էջ 325)

Լուսավոր ապագայի նկատմամբ բանաստեղծուհին խորհրդավոր երկյուղածություն ունի, նրանից ծնված արև, քանի որ դեռ կան ու պիտի լինեն «անգին, ջերմ ու սրտակեզ» հոգիները, որոնց կանչում է նա: (էջ 325)

Անչափելի լույս կա Մարո Մարգարյանի պոեզիայում, մեծ հավատ, որն առարկայացված է նրա բանաստեղծական տողերում և կերպավորված է «լավ մարդ» հասկացության մեջ: «Լավ մարդ» որոնող բանաստեղծուհու մասին այսպես է գրում գրականագետ Աբգար Ափինյանը՝ «Անցնում է այսպես լավ մարդկանց փնտրելով: Եվ որքան փնտրում, լավերն այնքան շատանում են: Եվ ես իր շնորհիվ հասկացա մեծ մի ճշմարտություն՝ եթե լավերը քիչ են, ուրեմն չեք փնտրել, լավ չեք փնտրել: Եթե մեծ երազանք ունենայիք հաստատ կփնտրեիք: Չէ՞ որ սա հրաշք է՝ լավը փնտրելը»: Մարո Մարգարյանի քնարերգությունից եկող ջերմությունը, արևն ու լույսը չի կարելի պարփակել, չափել կամ որևէ տարածության մեջ դնել:

Ուսումնասիրելով բանաստեղծուհու անցած ուղին՝ հանգում ենք հետևյալ հարցադրմանը՝ «Մի՞թե Մարո Մարգարյան բանաստեղծուհու ողջ կյանքի փիլիսոփայությունը լավ մարդկանց որոնումը չէ, մի՞թե մարդկության իրար հաջորդող սերունդների մեջ իր բանատոդերի միջոցով լավի ու բարու սերմերը ցանելու չէր եկել նա... այս բարկ արևի ներքո...»[5]:

Բարության ու շիտակության սերմերը ցանելու կոչ-հղումի շարունակությունը «Միայն մի թեքվիր» բանաստեղծության մեջ է, որտեղ նա արծարծում է «առանց շիկնելու» արժանավայել ու արդար ապրելու գաղափարը: Եվ հոգ չէ, թե ինչ կասի «շուռ եկած հոգով» բարեկամը, կամ ինչպիսի «խլուրդածին» ճանապարհներով կընթանա, միայն թե՝

Գիտենաս՝ պահել ես բարին,
Լավը խնայել.
Միայն կարենաս առանց շիկնելու
Քո որդու արդար
Աչքերին նայել: (էջ 329)

Պատկեր առ պատկեր զարգանում է «յոթհարկանի» խորամանկությամբ, «փրփուրը բերնին» ներբող ծոնող, «միշտ իրեն քաշող նժարը ձեռքին» մարդ-

[5] «Հայաստանի հանրապետություն», 1993, ապրիլ:

կանց կերպարը, որ ծափահարվում է «փուչ քամիների» փոշում մի նոր դրոշ բռնելու համար: Սակայն բանաստեղծուհուն հարկավոր չեն «դրոշ ու ներբող, ու փառք», այլ միայն՝ «Պայծառ անուններ՝ պահած հոգու մեջ որպես դրոշակ»:

Շարքն ավարտվում է «Օգնիր դեռ մի քիչ» համեմատաբար ծավալուն բանաստեղծությամբ, որի սկզբից մինչև վերջին տողը մտորումներ են 80-ական թվականների լճացման շրջանի իշխող բարոյականության դեմ և յուրօրինակ աղոթք՝ Առ Աստված՝ լցված սիրով ու հավատով՝

Օգնիր դեռ մի քիչ, որ կանգնած մնամ՝
Չլքեմ ես ինձ, չգործեմ իմ դեմ.
Ու դեռ տոկամ ես
Ու դեռ դիմանամ.
Եվ տարափոխիկ հողմերի հանդեպ
Չբեկվի հոգիս, չդողամ անդեմ: (էջ 333)

Մի կողմում բանաստեղծի «ես»-ն է՝ անապակ մաքրությամբ, մյուս կողմում օրավուր ահագնացող անտարբերությունը, որի անտեսանելի ծիրաններում խեղդամահ էին լինում արդարությունը, մարդկային անկեղծ հարաբերությունները, մարդու անհատականությունը:

Բանաստեղծուհին դատապարտում է «սին եսամոլի փառքի ջերմախտով», «անսեր սերերի ցուրտ աղքատությամբ» ապրող մորթապաշտներին, «պաղ դիմակ հագած» պաշտոնյաներին և մարդկային սրբությունները ոտնահարողներին: Նա քնարական «ես»-ի՝ դեպի վեհը ձգվող անհատի դիտակետից է փորձում զրուցել այս աշխարհը շենացնող Արարչի հետ՝

Ծիածան կապիր հոգնած աչքերիս,
Բարությունների պատկերներ շարիր՝
Սիրտս լիանա,
Ինչ կա գեղեցիկ այս արևի տակ՝
Լցվի հավատով ու հոգիանա: (էջ 337)

Նա հավատում է, որ դեռևս շատ են այն «մաքուր ծնունդները», «որոնց հոգում տաք լույսեր կան պահած», հավատում է աշխարհի՝ արդարությամբ ու հավատով մաքրագործվելուն, բարությամբ, սիրով ու ջերմությամբ վերածնվելուն: Աղոթք - բանաստեղծությունն ինքնատիպ լուծում է ստանում. բանաստեղծուհուն ոչինչ հարկավոր չէ, բացի՝

Ու ոչ մի բարիք
Հարկավոր չէ ինձ
Բոլոր սրբերից վեր ու անծնվեր՝
Մորս պատկերով դու ինձ պահպանիր: (էջ 337)

Մարո Մարգարյանը կարողացավ ստեղծել մարդու բարոյական աշխարհի, հոգեկան ապրումների և հոգևոր այրումի բանաստեղծականացումը:

Անվանի բանաստեղծուհին տարիների ստեղծագործական հայտնաբերումներով ու որոնումներով իմաստավորված բոլոր ժամանակներում հավատարիմ մնաց իր ընտրած ճանապարհին: